

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ֆրանս-ուսական դաշնակցութիւն.—Նրա դերը թէ՛ Հեռուոր և թէ՛ Մեր-
ձաւոր Արևելքում.—Քիւրքիայի և Ֆրանսիայի մէջ ծագած տարածայնու-
թիւնները.—Մակ-Աինլիի մահը:

Տարւոյ տարի առաջ Ֆրանսիայի և Ռուսաստանի մէջ կա-
պած դաշնակցութիւնը երեք անգամ ֆրանսիական ազգի բուն
համակրական ցոյցերի առիթ կղաւ. նախ՝ Կարնոյի նախագահու-
թեան ժամանակ, Տուլոնում, 1893 թուին, ապա՝ Փօրի օրօք
Շերբուրգում, Շալօնում և Պարիզում, 1896 թուին, և, վերջա-
պէս, այս աշնան սկզբում, Դիւնկերիէնում, Ռէյմսում, Կոմ-
պիէնում և Բետինիում: Դաշնակից ազգի բոլոր այդ համակրա-
կան ցոյցերի ժամանակ ուսուց. կայսրները իրանց ձառերում
ոչ մի ակնարկով յոյց չեն տուել որ հաւանութիւն են ապիս
ֆրանսիայի շօվինիստներին տենչին—վերադարձնել կորցրած
էլզաս-Լոտարինգիան, և միշտ շեշտել են այդ դաշնակցութեան
խաղաղասիրական նպատակը: Այս անգամ էլ ուսուց. կայսե-
րական Ձոյզը, նախ քան ներկայ գտնուելը ֆրանսիական նա-
ւատորմի և զօրքի մանեօվրներին, բարեհաճեց հանդիսատես
լինել գերմանական կայսրի այնքան փայփայած նաւատորմի
խաղերին: Այդ բաւականաչափ ընդգծում էր Ռուսաստանի խա-
ղաղասէր վերաբերմունքը դէպի իր դաշնակցի հակառակորդը:
Բայի այդ, Բետինիում Յարը պատասխանելով Լուրէին, ի միջի
այլոց ասաց թէ ամենախաղաղասէր միտումներով ոգեւորուած
երկու մեծ պետութիւնների դաշնակցութիւնը թանկագին տարը
է հանդիսանում ամբողջ մարդկութեան խաղաղացման գոր-
ծում:

Այդպիսով, երկպետեան դաշնակցութիւնը դառնալով եւ-
րոպական հաւասարակշռութեան հզօր գործօն, ոչ միայն տոն
է տալիս զուտ եւրոպական միջազգային գործերին, այլ և իր
ձեռքում է պահում Հեռուոր և Մերձաւոր Արևելքում ծագած
և ծագող բարդութիւնների լուծումը: Երկպետեան դաշնակցու-

Թեան ոյժը այդ հեռաւոր երկրներում աւելի ևս անցնց Անգլիայի դժբախտ պատերազմի շնորհիւ. կարծես իմպերիալիստական զանազանքը Անգլիայի մօտալուտ ծանր հիւանդութեան մի նշան լինէր: Մեծ Բրիտանիան քանի գնում աւելի է խճճուում այն թակարդների մէջ, որ նրա անհեռատես վարիչները պատրաստել էին խեղճ բռնիների համար:

Անգլիան հիմա իրան չափազանց կաշկանդուած է զգում, ուստի խօսում է մեծ պետութիւնների կօնցէրտում թոյլ ձայնով ու զիջումներ է անում այնտեղ, ուր մի տարի առաջ կը լսուէր բրիտանական առիւծի անեղ մոնչիւնը: Այդպէս խղճուկ էր նա չինական հարցում և երեի այդպէս կը լինի նաև Մերձաւոր Արևելքի ինդիերներում, եթէ առիթ լինի մեծ պետութիւններին իրանց նուազահանդէսը Իլդիդ-Քեօչկի պատուհանների տակ սարքել... Եւ Թիւրքիան կարծես դիտմամբ գրգռում է մեծ կօնցերտանտների երկարատև համբերութիւնը: Նա տեսնելով որ անպատիժ անցաւ հայկական կոտորածը, միևնոյն փամանակ իրօրիտանալով Յունաստանի վրայ տարած իր յաղթութիւններով և գերմանական կայսրի հօր բարեկամութեամբ — սկսել է աւելի համարձակ կերպով զանազան սոսնձութիւններ փորձել եւրոպական խնամակալութեան դէմ: Այդպէս էր պօստի և օտար վարժուհիների հարցը, այդպէս ևն, հակառակ Բերլինի համաժողովի պահանջներին, Հին-Սերբիայի, Մակեդոնիայի և Հայաստանի մէջ օրէցօր կրկնուող թիւրքական խռովութիւնները: Եւ «խաղաղասէր» եւրոպան մատերի արանքով է նայում թիւրքահպատակ քրիստոնեանների բազմաշարշար գլխներին թափուող այդ պատուհանների վրայ, համարելով այդ բորբորը Թիւրքիայի սեփական՝ «ներքին գործ», որ նա, բռունցքի է-թիկայով, իրաւունք ունի ըստ իր բարեհայեցողութեան կարգադրել: Սակայն բաւական է որ Թիւրքիայի այս կամ այն քայլը մի քիչ դիպչի այս կամ այն մեծ պետութեան հպատակի շահերին՝ մի ակնթարթում կորչում է բարեհոգի վերաբերմունքը և «խաղաղութիւն ամենեցունք» փոխում է պատերազմի աստուած Մարսի դոռող սպանալիքներին:

Գաղափարը, սկզբունքը, ալտրոնիստական սէրը անզօր են չարժեղ եւրոպական դիպլոմատների սրտի լարերը, մինչդեռ ոսկու շառաչիւնը իսկոյն զարթեցնում է նրանց հոգու թմրած ամբողջ կորովը: Թող բարոյախօս իղէալիստանքը կշտամբեն այդ շահասիրութիւնը. մերկանալի ոգին տիրապետում է մեր դարում, իսկ դիպլոմատիան՝ տիրապետող հոսանքների ներկայացուցիչ է: Շահը՝ նախ և առաջ: Ուստի առաջ Հանժոտոյի Յրանսիան էր ապշեցնող անտարբերութեամբ նայում թէ ինչ-

պէս զինուած թիւրքերը Պօլսի փողոցներում, եւրոպական զրահակիրների դիմաց, հազարներով մորթում էին անզէն հայ կանանց, ծերերին և երեխաներին, Բօսֆօրի ալիքներում էին խեղդում քրայնք աշխատանքով հեռու «վաթանում» ամբողջ զերդաստաններ պահող հայ համալններին, իսկ այժմ Դելիաստէի Ֆրանսիան է անվրդով դիտում Հին-Սերբիայում, Մակեդոնիայում և Մուշում կազմակերպուած կոտորածները: Հանրապետական Ֆրանսիան ոչ Հանօտօյի ժամանակ և ոչ այժմ մատմատի չը խփեց, մի ձիչ չարձակեց կանգնեցնելու համար վայրագ դահիճի սուրը, իսկ երբ իր մի քանի զրամատէրերի և վաշխառուների հաշիւները պահանջեցին—նա իսկոյն թողեց իր հաճոյախօսութիւնները և սկսեց Թիւրքիայի հետ խօսել բոլորովին այլ տոնով:

Թիւրքիայի և Ֆրանսիայի մէջ վերջերումս ծագած տարածայնութիւնների ինդիբը երևի յայտնի է ընթերցողին լրագիրներից: Շատ բնորոշ է այդ ամբողջ գործը, ուստի աւելորդ չը համարուի այստեղ առաջ բերել նրա էական կողմերը: Երկու Ֆրանսիացի կապիտալիստ ձեռնարկողներ, Միշէլ-Վաշա և Գրանէ (Ֆրանսիական պօստի նախկին միխատը), օգտուելով թրքական բարձր պաշտօնեաների թուլութիւնից, գուցէ և կաշառասիրութիւնից, կարողացան շատ ձեռնտու պայմանագրութիւն կապել թիւրքաց կառավարութեան հետ, որով Պօլսում ծովաքարափ և դօկեր (նաւարան) շինելու գործը իրանց կազմած ընկերութեան ձեռքն է ընկնում: Երբ ձեռնարկութիւնը իրագործուած է և ճարպիկ Ֆրանսիացիք սկսում են շահագործել նրան ըստ պայմանագրի, միայն այն ժամանակ են զլլիք ընկնում օսմանլիները, որ պայմանագրի բառացի գործադրութիւնը իրանց պետական գանձարանին մեծ վնասներ է հասցնում: Սկսուեց, ըստ թրքական սովորութեան, սակարկութիւն, ձգձգում, բայց Ֆրանսիացի կապիտալիստները հպատակ հայեր կամ ասորիներ չէին որ լսելեայն ամեն բան տանէին. նրանք բողոքեցին իրանց դեսպանին, պահանջելով որ Թիւրքիան կամ բառացի ձշտութեամբ կատարի պայմանագրի բոլոր կէտերը կամ յետ գնի ընկերութիւնից նրա ամբողջ ձեռնարկութիւնը, որ նստել էր 20 միլ. ֆրանկ, իսկ գնահատուած էր ոչ աւել և ոչ պակաս քան կրկին չափով: Սակայն թրքական գանձարանը վաղուց է գտնուած այն դրութեան մէջ, ինչ դրութեան մէջ են հիմա, «կրիզիսի» չտորհիւ, Բագուի երբեմն երջանիկ «խօղէիները» սնդուկները...

Սուլթանը ժամանակ է պահանջում խորհելու, բայց բնականաբար Կօնստանի կարճ պայմանաժամը ոչ կարող էր լքցնել

Թիւրքական զանձարանը, ոչ էլ մեղմացնել ֆրանսիացի կապիտալիստների չափազանց պահանջները: Այդ դեռ բաւական չէր. Կոնստանը կցում է «ծովաքարափի և դոկերի» ընկերութեան հաշուին նաև ֆրանսիացի մի քանի վաշխատուների հին հաշիւները իրանց բարդ տոկոսներով: Երևան են գալիս ինչ-որ Տիւրքինի և Լօրանդօ, որոնք մի ժամանակ ահագին տոկոսներով փող էին փոխ տուել Թիւրքիային: Որոշած ժամանակին բաւարարութիւն չը ստանալով, Կոնստանը խզում է իր յարաբերութիւնները Բարձր խրոան հետ և մեկնում Պօլսից: Պարիզի Թիւրքաց դեսպանն էլ հրաման է ստանում իր կառավարութիւնից՝ չը վերադառնալ արձակուրդից (Շվէյցարիայում) իր պաշտօնավայրը: Ֆրանսիական կառավարութիւնը ամեն կերպ աշխատում է Թիւրքիային հասկացնել իր սարսափելի դժգոհութիւնը: Հանրապետական կառավարութիւնը առաջարկում է որ Պարիզից հեռանան և թրքական պօլիցիայի այն վաշտը, որ նրա հաւանութեամբ մի քանի տարի շարունակ ապրում էր Ֆրանսիայի մայրաքաղաքում, նպատակ ունենալով դադանի լրտեսել թիւրք յեղափոխականներին: Բեւտինիի զօրահանդէսներին չէր հրաւիրուած թիւրքաց դեսպանը... մի խօսքով մի քանի կապիտալիստների և վաշխատութիւնների շահերի պաշտպանութիւնը պատճառ բռնելով Հին-Աշխնորհի ամենամեծ հանրապետութիւնը, Ֆրանսիան, բարւոք է համարում հիմա դէպի Թիւրքիան վարուել ոչ առաջուայ պէս բարեկամական ձևերով...

Այլ խնդիր էր յուզում ովկիանոսի միւս ավում տարածուած Նոր-Աշխարհի այն մեծ հանրապետութեան մէջ, որ հարիւր տարի առաջ այնքան ոգևորեց Ֆրանսիայի մեծ յեղափոխութեան գործիչներին:

Մեր խօսքը Հիւս. Ամ. Միացեալ-Նահանգների մասին է: Եանկիները Բուֆալօյում բացուած համամերիկական ցուցահանդէսում տօնում էին աշխարհիս ամենամեծ դիմօկրատիկական հանրապետութեան, Մ.-Նահանգների քաղաքական, տնտեսական և սոցիալական վիթխարի առաջադիմութեան հարիւրամեակը: Բայց այդ առաջադիմութիւնը չի գոհացնում որոշ աշխարհայեցողութեան մարդկանց, որոնցից մէկը, մի անարխիստ, տօնական ուրախութիւնների ժամանակ մահացու հարուած հասցնելով հանրապետութեան յարգուած նախագահին, վշտի և սարսափի մէջ գցեց կեանքից գոհ եանկիներին:

Մակ-Կինլին տիպիկական եանկի էր. նա իր սեփական եռանդի, տոկունութեան և ընդունակութիւնների չնորհիւ ճանապարհ հարթեց և կեանքի կուում չքաւոր և անյայտ դրութիւնից հասաւ հանրապետութեան նախագահի նշանաւոր պաշտօ-

նին: Նա ծնուել էր 1844 թուին: Նրա ընտանիքը շտաբանդա-
կան ծագում ունէր, հայրը լեոնային արդիւնագործութեամբ էր
պարագում և միջազգային առևտրի մէջ կողմնակից էր հո-
վանաւորող սիստէմին: Ուսուցչի, օֆիցէրի և փաստաբանի,
գատարազի զբաղմունքները յաջորդում էին իրար, մինչև որ
1876 թուին ընտրուեց ներկայացուցիչների գաշակցական պա-
լատի մէջ, ուր նա բոլորի ուշադրութիւնը գրաւեց երկրի տըն-
տեսական ինդիքների խոր հմտութեամբ: Նա չէր փայլում ճար-
տասանական ձևերով, սակայն խօսում էր պարզ, տրամաբանօ-
րէն, մեծ հմտութեամբ օգտուելով ֆակտերի այն ահագին պա-
շարով, որ տալիս էին նրան կեանքի և հարցի ուսումնասիրու-
թիւնը: Իր գաղափարները տարածելու համար նա պտտում էր
երկրի մէջ, միտինգներ էր կազմում և ժողովրդի հետ խօսում իր
պարզ և համոզիչ լեզուով: 1896 թուի նախագահական ընտրու-
թիւնների ժամանակ Մակ-Կինլին ստացաւ 7,123,234 ձայն,
մինչդեռ նրա հակառակորդ Բրայանը 6,499,365 ձայն: Մակ-
Կինլին կողմնակից էր Միացեալ-Նահանգների իշխանութեան
ընդարձակման և արդիւնագործութեան հովանաւորող սիստէ-
մին: Նրա իմպերիալիզմի հետևանք էր Սպանիայի հետ պատե-
րագմը, որ միացրեց հանրապետութեան հողերին Կուբան և Ֆի-
լիպպինեան կղզիները: 1900 թուին ընտրութիւնները ցոյց տուին
որ եանկինների մեծամասնութիւնը հաւանում է Մակ-Կինլիի ուղ-
ղութիւնը թէ արտաքին և թէ ներքին գործերում: Նրա վերջին
ճառը որ նա արտասանեց Բուֆալօյում, ցոյց է տալիս թէ դեռ
որքան եռանդ կար նրա մէջ և ինչ մեծ ծրագիրներ ունէր նա
իրագործելու: Սակայն նրա յաջորդը փոխ-նախագահ Ռուզ-
վելտը, կարող է համարուել իր նախորդի գործունէութեան
իսկական շարունակող: Իր հիմնական հայեացքներով Ռուզվելտը
չի տարբերում Մակ-Կինլիից:

Լ. Ս.